

## ՌՌԻԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

Արևելագետ-թուրքագետ, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

Ծնվել է 1955 թ. Երևանում՝ օսմանագետ Արամ Սաֆրաստյանի ընտանիքում: 1977 թ. ավարտել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժինը և 1980 թ.՝ Հայաստանի ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան:

1981 թ. աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ համակարգում: Եղել է Արևելագիտության ինստիտուտի կրտսեր, հետագայում՝ ավագ և առաջատար գիտաշխատող, Թուրքիայի բաժնի վարիչ: 1988 – 1991 թթ. աշխատել է փոխտնօրեն ՀՀ ԳԱԱ Սփյուռքի ու ցեղասպանության ուսումնասիրման կենտրոնում: 2006 թ. ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրենն է:

Երկար տարիներ վարում է դասախոսական աշխատանք Երևանի բուհերում: ԵՊՀ պրոֆեսոր է, 2015 թ. համատեղության կարգով Խ Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչն է: Դասավանդում է Թուրքիայի պատմության և ներքին ու արտաքին քաղաքականության, ցեղասպանագիտության և տարածաշրջանային հետազոտությունների հետ առնչվող առարկաներ:

1990-ական թթ. եղել է Հայաստանի Գերագույն Խորհրդի միջազգային հարաբերությունների գծով ավագ փորձագետ, ՀՀ Նախագահի աշխատակազմի վերլուծական բաժնի վարիչի տեղակալ, ինչպես նաև վարել է դիվանագիտական աշխատանք Գերմանիայում՝ աշխատելով Բոննում ՀՀ դեսպանատան խորհրդական:

1998 թ. վերադարձել է գիտական աշխատանքի: Հաղթել է մի շարք հեղինակավոր միջազգային գիտահետազոտական մրցույթներում՝ Հումբոլդտի անվան (Գերմանիա, 1999 թ.),

Ֆուլբրայթի անվան (ԱՄՆ, 2001 թ.), Միջազգային քաղաքականության ուսումնասիրման (Հունգարիա, 2003 թ.) և հետազոտական աշխատանք է տարել այդ երկրների առաջատար համալսարաններում. Ռուսիի համալսարան (Բոխում, Գերմանիա), Բրքլիի Կալիֆորնիական համալսարան (Բրքլի, ԱՄՆ) և Կենտրոնական Եվրոպական համալսարան (Բուդապեշտ, Հունգարիա):

Հիմնադիրն է ու խմբագիրը «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» և «Ժամանակակից Եվրասիա» գիտական պարբերականների: Մի շարք արտասահմանյան գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է. *Asiatica* (**Մանկտ Պետերբուրգ, Ռուսաստան**), *Россия и новые государства Евразии* (**Մոսկվա, Ռուսաստան**), *Sociology and Anthropology* (Ալիամբրա, **ԱՄՆ**), *International Journal of Research and Humanities Studies* (**Ման Ֆրանցիսկո, ԱՄՆ**): 2012 թ. ընտրվել է Կանադայի Վանկուվեր քաղաքի Նոր Վեստմինստերյան քոլեջի պատվավոր ավագ դասախոս:

Հեղինակ է հարյուրից ավելի գիտական աշխատությունների, որոնք նվիրված են Թուրքիայի պատմության և արտաքին քաղաքականության, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ուսումնասիրման հարցերին:

Վարում է նաև հասարակական աշխատանք: ՀՀ Հանրային խորհրդի Կրոնի, սփյուռքի և միջազգային ինտեգրման հանձնաժողովի նախագահն է:

Պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով և մի շարք այլ պարգևներով: